ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման նախագիծը մշակվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով:

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեում կատարվող փոփոխությունները պայմանավորված են.

1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի և 2025 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Գավառի համայնքապետարանի միջև կնքված պետական աջակցության և պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների վերաբերյալ պայմանագրերը

1) Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային մասը՝ Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ տողը ավելացնել 1,402.100 /մեկ միլիոն չորս հարյուր երկու հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամով, իսկ Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ տողը ավելացնել 46,734,300 /քառասունվեց միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամով.

2) Ծախսային մասում 04 բաժնի 2 խմբի 1 դասի /գյուղատնտեսություն/ գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 46,734,300 /քառասունվեց միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամով գարնանը ցանք կատարած շահառուներին փոխհատուցում տրամադրելու, իսկ 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 1,402.100 /մեկ միլիոն չորս հարյուր երկու հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամով մոնիտորինգ իրականացրած աշխատողներին աշխատավարձ վճարելու նպատակով:

2. Ծախսային մասում՝ 2025 թվականի բյուջեով նախատեսված

1) 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1,861.000 /մեկ միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար/ ՀՀ դրամով, որից՝

ա. 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ գործառնական դասակարգման 4213 /կոմունալ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 935,000 /ինն հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամով Գավառի համայնքապետարանի աղբահանության վճարները վճարելու նպատակով

բ. 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական դաստիարակություն/ գործառնական դասակարգման 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 926,000 /ինն հարյուր քսանվեց հազար/ ՀՀ դրամով «Գանձակի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի մեկ սենյակի ընթացիկ նորոգման աշխատանքների համար

2) 09 բաժնի 1 խմբի 1 դասի /Նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 67,846.300 ՀՀ դրամով, որից՝

ա. 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 7,123,900 /յոթ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար ինն հարյուր/ ՀՀ դրամով Գավառի համայնքապետարանի վարչական շենքի կապիտալ վերանորոգման և Լանջաղբյուրի վարչական շենքի սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար

բ. 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)/ գործառնական դասակարգման 5411 /հողեր/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2,502,500 /երկու միլիոն հինգ հարյուր երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով Գավառ քաղաքի Ռ. Զախարյան փողոց N 2 հասցեի, Ռ. Զախարյան փողոց N 2/1 հասցեի և Ռ. Զախարյան փողոց N 2/2 հասցեի հասարակական կառուցապատման հողամասերի ձեռքբերման նպատակով

գ. 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձանների և մշակույթային արժեքների վերականգնում և պահպանում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 12,307,000 /տասներկու միլիոն երեք հարյուր յոթ հազար/ ՀՀ դրամով Գավառ համայնքի Լճափ բնակավայրի զոհերին նվիրված հուշարձանի բարեկարգման աշխատանքների իրականացման համար

դ. 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)/ գործառնական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 39,429,500 /երեսունինն միլիոն չորս հարյուր քսանինն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամով Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորմամբ համայնքի բնակչության կողմից ներկայացված և հավանության արժանացած /ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ, Ազատության փողոցում մանկական խաղահրապարակի (խաղարաններ և ատրակցիոններ) կառուցում, ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ, Ազատության փողոցում մարզահրապարակի (բացօթյա Street Workout) կառուցում և ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ Ազատության փողոցում սպորտային հրապարակի (փողոցային ֆուտբոլ և բասկետբոլ) կառուցմ/ ծրագրերի շրջանակներում աշխատանքների իրականացման համար, իսկ 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 6,483,400 /վեց միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր/ ՀՀ դրամով մարզական սարքավորումներ ձեռքբերելու նպատակով

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների
հաշվառման և հավաքագրման բաժին Տ. Բրսիկյան